



**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Բ Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն  
Ք Ա Ղ Ա Ք Ա Յ Ի Ա Կ Ա Ն Ծ Ա Ռ Ա Յ ՈՒ Թ Յ Ա Ն Խ Ո Ր Հ ՈՒ Բ Ղ  
Մ Ա Մ Լ Ո Ք Ա Ր Տ ՈՒ Ղ Ա Ր**

Երևան 0009, Տերյան 89, ☎ 52-86-90, [infocouncil@arminco.com](mailto:infocouncil@arminco.com)

**Միջազգային համագործակցության նոր հնարավորություններ  
քաղաքացիական ծառայության ոլորտում**

Իռլանդիայի հանրային նշանակումների ծառայության հրավերով 2010 թվականի սեպտեմբերի 6-8-ը Դուբլինում էր գտնվում ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահ Մանվել Բադալյանի գլխավորած պատվիրակությունը: Այցի նպատակն էր մասնակցությունը <<Մասնագիտությունը հեռանկարում>> ամենամյա համաժողովների շրջանակում Դուբլինում 2010 թվականի սեպտեմբերի 6-8-ը կազմակերպվող <<Ակադեմիայի առաջնորդող դերը կառավարման արդյունավետության բարձրացման գործում>> թեմայով կոնֆերանսին, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի և Իռլանդիայի հանրային նշանակումների ծառայություն միջև համագործակցության հուշագրի ստորագրումն ու 2010-2014 թվականների համագործակցության աշխատանքային ծրագրերի պլանավորումը:

Այցի շրջանակներում պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել Իռլանդիայի հանրային նշանակումների ծառայության ղեկավար Բրայան Էնդրյուսի, ինչպես նաև կոնֆերանսի մասնակից երկրների պատվիրակությունների հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են երկկողմ հարաբերությունների զարգացման տարեկան աշխատանքային ծրագրեր կազմելու, մարդկային ռեսուրսների զարգացման բնագավառում համատեղ ծրագրերի իրականացման, փորձի փոխանակման և համագործակցության իրականացման հնարավոր եղանակներին և մեխանիզմներին վերաբերող հարցեր:

Իռլանդիայի հանրային նշանակումների ծառայության ղեկավար Բրայան Էնդրյուսի հետ համաձայնություն է ձեռք բերվել ստորագրել երկու կառոյցների միջև հետագա համագործակցության 2010-2014թթ աշխատանքային, գիտական և կրթական ծրագրեր: Սեպտեմբերի 6-ին ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի և Իռլանդիայի հանրային նշանակումների ծառայություն միջև ստորագրվել է հուշաժիր <<Քաղաքացիական ծառայության և հանրային կառավարման ոլորտներում համագործակցության մասին>>: Հուշագրով նախատեսվում է զարգացնել քաղաքացիական ծառայողների մասնագիտական գիտելիքներն ու կառավարչական հմտությունները Եվրոպական ինտեգրացիայի բնագավառում, իրականացնել քաղաքացիական ծառայության ոլորտում մագիստրոսների, մասնագետների և վերապատրաստողների պատրաստում, մատչելի դարձնել երկու կողմերի ձեռքբերումները քաղաքացիական ծառայության բնագավառում՝ համատեղ խորհրդակցությունների, համաժողովների, կլոբ սեղանների, ծրագրերի, փորձի փոխանակման, ուսումնական այցերի և այլ նախաձեռնությունների միջոցով և այլն:

Իռլանդական կողմի հետ համագործակցության արդյունքում ակնկալվում է փորձագիտական մակարդակով ուսումնասիրել կադրային բնագավառում Իռլանդիայում իրականացվող քաղաքականությունը, վերապատրաստումների կազմակերպման և իրականացման, ֆինանսավորման և գնահատման, ծառայողների կատարողականի գնահատման, էթիկայի կանոնների(շահերի բախում, նվերներ, եկամտների հայտարարագրում և այլն) մշակման և պահպանման և այլ խնդիրների հետ կապված փորձն ու կառուցակարգերը: Մեր քաղաքացիական ծառայողները հնարավորություն կունենան մասնակցելու մարդկային ռեսուրսների կառավարման, վերապատրաստողների վերապատրաստման և այլ թեմաներով վերապատրաստման ծրագրերին: Հնարավոր կլինի կառավարման և վարչարարության ոլորտում իրականացնել համատեղ գիտական, ուսումնական ծրագրեր, սեմինարներ և այլն:

<<Մասնագիտությունը հեռանկարում>> ամենամյա համաժողովին, բացի Հայաստանից, մասնակցում էին պատվիրակություններ Բելգիայից, Նիդեռլանդներից, Կանադայից, Լեհաստանից, Ֆինլանդիայից, Հնդկաստանից, Ուկրաինայից, Ադրբեջանից և այլն: Քաղաքացիական ծառայության համակարգի զարգացման, այն միջազգայնորեն ավելի ճանաչելի դարձնելու առումով կարևորելով միջազգային նմանատիպ կոնֆերանսների անցկացումը, դրանցում Հայաստանի ակտիվ նախաձեռնողական մասնակցությունը՝ Հայաստանը պատրաստակամություն է հայտնել

<<Մասնագիտությունը հեռանկարում>> հաջորդ, 2011 թվականի համաժողովն անցկացնել Երևանում,  
ինչն ընդունվել է համաժողովի մասնակիցների կողմից:

Գոռ Աբրահամյան